Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2021 թ.
փետրվարի 9-ի N 101-Ա
որոշման

«ՇԻՐԱԿ» ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի սակավապահովված ընտանիքներին, ծնողազուրկ երեխաներին, մանկատներին, ծերանոցներին անվճար բուժսպասարկում, ատամնաբուժական և ակնաբուժական ծառայությունների իրականացում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պ. Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
4.	Ծրագիրը կատարողը	Գյումրու «ԱՌԴԱ» առողջապահական և աջակցման կենտրոն բարեգործական հիմնադրամ (Շիրակի մարզ, Գյումրի, Մ. Խորենացի 19, ՀՎՀՀ՝ 05531591):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	ՀՀ, Շիրակի մարզ, Գյումրի, առողջապահության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	363,300,000 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Շիրակի մարզի, Գյումրի քաղաքի սակավապահովված ընտանիքներ, ծնողազուրկ երեխաներ, մանկատան սաներ և միայնակ ծերեր: Տարեկան սպասարկվելու է շուրջ 11000 շահառու:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2021 թվականի փետրվարի 15-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 30-ը: Ծրագիրը շարունակական է, այն իրականացվում է սկսած 2006 թվականից:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Անվճար բժշկական ծառայությունների (ուլտրաձայնային ախտորոշում, բիոքիմիական-կլինիկական լաբորատոր ծառայություններ, գինեկոլոգիական, թերապևտիկ, ակնաբուժական ծառայություններ) իրականացում – 267,300,000 դրամ. • Բժշկական սարքավորումների, պարագաների և դեղորայքի ձեռքբերում կամ ներմուծում – 70,000,000 դրամ.

		• Գրասենյակային, վարչական և կոմունալ ծախսեր – 26,000,000 դրամ.
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	• Բժշկական սարքավորումների, գույքի ձեռքբերում կամ ներմուծում – 92,500,000 դրամ, տարեկան 18,500,000 դրամ. • Բժշկական պարագաների ձեռքբերում կամ ներմուծում – 50,000,000 դրամ, տարեկան 10,000,000 դրամ. • Դեղորայքի ձեռքբերում – 20,000,000 դրամ, տարեկան 4,000,000 դրամ. • Գրասենյակային և վարչական ծախսեր – 10,500,000 դրամ, տարեկան 2,100,000 դրամ. • Կոմունալ ծախսեր – 12,500,000 դրամ, տարեկան 2,500,000 դրամ. • Ֆինանսական գործունեության աուդիտի ծախսեր – 3,000,000 դրամ, տարեկան 600,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	• Գրասենյակային և վարչական ծախսեր – 10,500,000 դրամ • Կոմունալ ծախսեր – 12,500,000 դրամ, այդ թվում. Գազամատակարարում – 6,500,000 դրամ Էլեկտրամատակարարում – 2,800,000 դրամ Հեռախոսակապի ծառայություններ – 1,250,000 դրամ • Ֆինանսական գործունեության աուդիտի ծախսեր – 3,000,000 դրամ
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառա-վարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:
13.	Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերա-հսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N66-Ն որոշմամբ հաստատ-ված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ